

ԿԱՐԻՆԵ ԱՂԱԲԵԿՅԱՆ

ՍԻՐՈՒՑ
ՉԵՍ ՓԱԽՉԻ



Գ Ի Տ Ա Ն Ք
Երևան 2011

Կարինե Աղաբեկյանը ճանաչված արձակագիր է: Նրա գրչին են պատկանում «Սիրո հասունացումը», «Սիրո վերադարձը», «Կնոջ մենամարտը», «Սիրո կանչը», «Զգացմունքների ներդաշնակություն», «Սեր և արժանապատվություն», «Կգան բազում արշալույսներ», «Սիրո ուսուցիչը», «Սիրո ծուղակ», «Շանթի սանձահարումը» և «Սիրո հրդեհ» վիպակները, որոնք նշանավորեցին հայ սիրավեպի սկզբնավորումը և մեծ հետաքրքրություն առաջացրին ընթերցողների շրջանում:

Աղաբեկյան, Կ

Սիրուց չես փախչի: - Եր.: Գիտամք, - 140 էջ.

Ձատկի ճաշկերույթի հրավերն ընդունելով՝ Զրանտ Սեթյանը եկավ իր երիտասարդ քարտուղարուհու տուն: Առաջին իսկ պահից նրա ուշադրությունը գրավեց քարտուղարուհու մայրը՝ արտասովոր հմայիչ կինը, որը մագնիսի պես ձգեց նրան:

Տաթևը գիտեր, որ դուստրը տարված է իր պետով, և ամեն կերպ ջանում էր փախչել սիրուց:

Բայց եթե տղամարդը պնդում է...

ISBN 978-9939-810-11-9

© Կարինե Աղաբեկյան, 2011

Կազմի նկարի հեղինակ՝ Ռազմիկ Սարգսյան

Այս գրքի բոլոր հերոսներն ու իրադարձությունները հորինված են, ամեն համընկնումը՝ պատահականություն:

Կիսաբաց դուռը հրավիրում էր: Ներսից լսվում էին խոսակցության ու ծիծաղի ձայներ: Հրանտ Սեթյանը ներս մտավ և հայտնվեց նրբաճաշակ, ընդարձակ սենյակում: Նայեց շուրջը: Հյուրերն այնքան էլ շատ չէին՝ մոտ քսան հոգի: Նրա ուշադրությունը իսկույն գրավեց մի կին: *Իսկական գեղեցկուհի է:* Հրանտը գնահատող հայացքով ընդգրկեց կնոջը և զգաց, որ նա մագնիսի պես ձգում է իրեն:

Կինը միջահասակ էր, վայելչակազմ: Մուգ շագանակագույն մազերն ընդգծում էին թափանցիկ մաշկը, իսկ շոկոլադագույն աչքերի հայացքը նման չէր մշտապես սննդակարգ պահող մարդու հայացքի: Հրանտին դուր եկավ նրա հագուստի նրբագեղությունը. բաց մանուշակագույն մետաքսե զգեստը, անփութորեն գրկելով մարմինը, իջնում էր մինչև ծնկները: Փափուկ դեղին կաշվե լայն գոտին շեշտում էր բարակ իրանը, իսկ նույն գույնի բարձրակրունկ կոշիկներն ավելի էին երկարացնում բարեձև ոտքերը: Իսկ երբ նա վեր կացավ... Հրանտը հագիվ զսպեց ականա տնքոցը: Կնոջ շարժումներն այնպես գայթակղիչ էին, որ Հրանտի աչքի առաջ ականա պատկերվեցին թե՛ զիշերներ և ճմռթված սավաններ...

Վանելով անվայելուչ պատկերները՝ Հրանտը կտրուկ արտաշնչեց և ցածր սեղանիկին դրեց թանկարժեք գինու շիշը, որը նվեր էր բերել տանտիրուհուն: Շարժումը գրավեց հյուրերի հետ աշխուժորեն զրուցող աղջկա ուշադրությունը: Հրանտը նկատեց Սեդային. դեմքին ժպիտ հայտնվեց, իսկ սև աչքերը փայլեցին: Նա տեսավ, որ Սեդան հեռացավ զրուցակիցներից և ուղղվեց դեպի իրեն դուր եկած կինը:

Քույրե՞ր են... Հրանտը ուշադիր նայեց նրանց: Երբ նրանք,

գլուխներն իրար մոտեցրած, սկսեցին փսփսալ, նմանությունն ակնհայտ դարձավ. հասակը, կազմվածքը, մաշկի ու մազերի գույնը: Բայց և երևան եկավ տարբերությունը: Սեդան շատ լավիկն էր, և նրա աչքերում քսան տարին չբոլորած պարմանուհուն բնորոշ արտահայտություն կար: Իսկ կինը, ինչպես երևում էր, գեղեցիկ արտաքինից բացի ուներ կյանքի փորձ և սեփական արժանապատվության զգացում:

Հրանտը արդեն մի քանի ամիս ճանաչում էր Սեդային. անցյալ աշնանից նա կես դրույքով քարտուղարուհի էր իր ընկերությունում: Համատեղում էր աշխատանքը ուսման հետ: Սեդան պատմել էր Հրանտին քրոջ մասին. նա երկու տարով իրենից մեծ է, ամուսնացած է և յոթ ամսական դուստրիկ ունի: Ուրեմն գեղեցկուհին, որով ինքը հիանում է, Սեդայի քո՞ւյրն է:

Կինը նայեց Հրանտի կողմը, և վառ շուրթերին սիրալիոր ժպիտ հայտնվեց: Նա անտարակույս քսանմեկ տարեկանից մեծ էր երևում: Եթե դա Սեդայի քույրն է, ապա ո՞ր է տանտիրուհին՝ մայրը:

Մինչ երկու կանայք մոտենում էին նրան, Հրանտը անցողակի հայացք նետեց հյուրերին: Նրա ուշադրությունը գրավեց մի տարեց կին, որը ժպտալով գրուցում էր ճաղատ տղամարդու հետ: Նա նույնպես նման էր Սեդային և նրա քրոջը: *Երևի հիսունն անց է*, մտածեց Հրանտը, բայց տարիքն ավելի ճիշտ որոշել չկարողացավ: Լավ պահպանված տիկին էր՝ գեղեցիկ դիմագծերով և հիանալի մաշկով:

Հրանտն առանձնապես ցանկություն չուներ հյուր գնալու: Բայց հետո որոշեց չիրաժարվել հաճելի ժամանցից, առավել ևս, որ Սուրբ Ջատկի օրվա համար ուրիշ ոչ մի բան չէր ծրագրել: Նա կարծում էր, թե դա սովորական տոնական ճաշկերույթ կլինի. բոլորը կհավաքվեն կանաչեղենով ու ներկված ձվերով զարդարված ավանդական սեղանի շուրջը, կճաշակեն ձուկ և

չամիչով փլավ, կենաց կասեն, կարմիր գինի կըմպեն, կգրուցեն դեսից դենից, հետո էլ տանտիրուհուն շնորհակալություն կասեն ու կցրվեն իրենց տները: Սակայն մտքովն իսկ չէր անցնում, որ ինքն այստեղ կհանդիպի այս չքնաղ կնոջը, ում լոկ նայելիս շունչը բռնվում էր:

Կանայք մոտեցան, և Յրանտը նայեց գեղեցկուհու ջինջ շոկոլադագույն աչքերին: Այդ պահին հագիվ էր հասկանում Սեդայի ասածը: Ավելի կարևոր էր հայտնագործությունը՝ այդ կինն ավելի շուտ իր հասակակիցն է, քան Սեդայի քույրը:

- Քրիստոս հարյա՛վ ի մեռելոց, - ջերմ ժպիտով ողջունեց Սեդան: - Բարի գալուստ, պարո՞ն Սեթյան, ուրախ եմ, որ եկաք: - Ապա նայեց իր ուղեկցուհուն, և ժպիտը չարածճի դարձավ: - Ուրախ ե՞նք, որ եկաք, - ճշտեց նա: - Ծանոթացեք, մայրիկս է՝ Տաթև Յովունյանը: - Սեդան թեթևակի շրջվեց: - Մա՛մ, իմ պետն է՝ Յրանտ Սեթյանը:

- Բարի՛ գալուստ, պարո՞ն Սեթյան: Քրիստոս հարյա՛վ ի մեռելոց:

Յրանտը տեսավ իրեն մեկնած նուրբ ձեռքը և սեղմեց: Լսեց Տաթևի քնքուշ ձայնը և կարողացավ պատշաճ կերպով պատասխանել.

- Օրհնյա՛լ է հարությունը Քրիստոսի:

Յետո ոչ մի կերպ չէր կարողանում հիշել՝ ինքն ինչ էր ասում իրենց ծանոթության առաջին րոպեներին: Նրա ողջ էությունը համակված էր ուրախությամբ: Նախագգացումը նրան չէր խաբել. գեղեցկուհին ոչ թե Սեդայի ամուսնացած մեծ քույրն էր, այլ մայրը: Նա հիշում էր Սեդայի ասածը, որ իր մայրը այրի է և արդեն շատ վաղուց:

Երբ Յրանտը վերադարձավ իր անսպասելիորեն դատարկ ու սառը թվացող բնակարանը, այդ երեկոյի առանձին վառ դրվագները դրոշմված էին հիշողության մեջ:

Նա խնդրեց իրեն Հրանտ անվանել, Տաթևն էլ ասաց, որ իրեն անունով կոչի: Նա մատուցեց նվեր բերած կարմիր գինին, իսկ Տաթևը շնորհակալությամբ ընդունեց:

Հրանտը հիշեց իր մարմնի արծազանքը, երբ իրենք կողք-կողքի մի քանի քայլ արեցին: Մինչ Տաթևը նրան ներկայացնում էր մյուս հյուրերին, Հրանտը կլանում էր նրա հաճելի ձայնը: Հետո Տաթևը ծանոթացրեց նրան մեծ դատեր հետ, և Հրանտը որսաց նրանց ձայներանգների նմանությունը: Թեև Մարոն նույնպես հմայիչ էր, նրա գեղեցկությունը խամրում էր մոր կողքին: Հրանտը հաճույքով հիշեց, թե իրեն ինչպես ներկայացրին այն տարեց տիկնոջը, որը, ինչպես պարզվեց, Սեդայի տատն է...

Առանձին դրվագներ՝ բոլորն էլ, սակայն, հաճելի: Իսկ առավել հաճելի հիշողություններին նա անդրադարձավ քիչ ավելի ուշ՝ անկողին մտնելուց հետո:

Տաթև, Տաթև... Անունը պտտվում էր Հրանտի գլխում: Նա պառկած էր փակ աչքերով, և ներսը ամեն ինչ թրթռում էր: Ցնցո՞ղ կին է:

Հրանտը ոչ մի բառ չկարողացավ հիշել մյուս հյուրերի հետ ունեցած զրույցներից, բայց հիշում էր Տաթևի հետ փոխանակած յուրաքանչյուր բառը:

- Դուք շատ բարի եք, Տաթև: Հրավիրել եք ինձ՝ անծանոթիս, Ձատկի ճաշկերույթին, թեև դա ընտանեկան տոն է:

- Աղջիկս ասաց, որ դուք Ձատկի տոնը մենակ եք անցկացնում: - Տաթևը գլուխը հետ գցեց ու նայեց նրան: - Տոն օրը չի կարելի մենակ լինել, ես դա լավ գիտեմ:

Տաթև ալիքը վայրկենապես ողողեց Հրանտի ողջ մարմինը, հետո հուրը կենտրոնացավ կրծքում և ավելի ցած: Շունչն ընդհատվում էր: Ի՞նչ էր պատճառը: Տաթևի ձայնում զգացվող համակրա՞նքը, թե՞ կայծկտուն աչքերն ու շուրթերի մեղմ կո-

րութունը, երբ ժպտում էր. Յրանտը չգիտեր: Ջգուն էր միայն, որ ներսը մի տարօրինակ անհանգստություն է առաջացել:

- Ես արդեն վաղուց մենակ եմ, - պատասխանեց՝ հազիվ իրեն զսպելով, որ չհամբուրի Տաթևին: Հավանաբար, սևեռուն հայացքը մատնեց Յրանտին, քանի որ կնոջ աչքերը բռնկվեցին, և նա նյարդայնորեն լեզուն անցկացրեց շուրթերով:

Արդյո՞ք նա նույն բանն զգաց, ինչ որ ես, նորից ու նորից իրեն հարցնում էր Յրանտը, երբ մութ մնջարանում պառկած հիշում էր իրենց փոխանակած խոսքերը: Բարեկիրթ խոսելաոճն օգնեց քողարկել մեկեն բռնկված ցանկությունը, որը, ինչպես թվաց, փոխադարձ էր: Հուսալով, որ Տաթևն էլ հիմա իր մասին է մտածում, Յրանտը շրջվեց փորի վրա: Իրեն շփոթեցրել էր իր մարմնի արտասովոր արձագանքը: Նա ուղղակի այրվում էր ցանկությունից: Իհարկե, նա հասուն ու առողջ տղամարդ է, և կանայք իր մեջ ցանկություն են հարուցում՝ երբեմն բավականին ուժեղ: Սակայն երբևէ չէր բռնվել նման ամենակուլ ցանկությամբ, որ զգացել էր Տաթևի հանդեպ:

Հանգստանալու համար Յրանտը փորձեց ամեն ինչ վերլուծել և գտնել իր այդպիսի արձագանքի խելամիտ բացատրությունը: Եվ աչքի առաջ վերստին հայտնվեց Տաթևի պատկերը: Յրանտը փակեց աչքերը, շնչառությունն արագացավ: Հստակ պատկերացրեց Տաթևին՝ իր գայթակղիչ մետաքսե զգեստով: Իր երևակայության մեջ ինքը դանդաղ, կրքոտ հայացքով վեր սահեց երկար բարեզեղ ոտքերով, կոնքի փափուկ կորուսյամբ, գոտիով սեղմված բարակ իրանով: Իսկ կո՛ւրծքը... պարզապես կատարյալ է. Յրանտի բերանը ցամաքեց, և մտովի նա հայացքը արագ դարձրեց դեպի դեմքը: Նրբենի քթիկ, բարձր այտոսկրեր և վճռական կզակ: Շոկոլադագույն աչքերում խելացիություն կա և զգայականություն է թաքնված: Շուրթե՛րը... ինքն ամեն ինչ կաներ, միայն թե զգար այդ շուր-

թերի համը:

Հրանտի կրծքից խուլ տնքոց դուրս թռավ: Անհագ ցանկությունը տանջում էր նրան, մարմինը կծկվեց, ինչպես ջրածգությունից: Ստիպված էր նույնիսկ բաց անել աչքերը, որպեսզի Տաթևի պատկերը չքանա: Սիրտը մոլեգնաբար բաբախում էր, կաչուն քրտինքը դուրս տվեց մաշկին: Ամեն բան վերլուծելու փորձը լոկ վատթարացրեց նրա վիճակը: Չէ, ինքը երբեք նման կրքոտությամբ չէր ցանկացել կնոջը: Ցանկանում էր տիրանալ նրան անմիջապես, հե՛նց հիմա:

Երբ սրտի զարկերը կարգավորվեցին, իսկ ինքը հանդարտվեց, Հրանտը որոշեց անպայման նվաճել Տաթևին: Նպատակը դրված էր, և նա անմիջապես սկսեց խորհրդածել դրան հասնելու ուղիների շուրջը:

Ուրեմն այսպես: Նախ պետք է հիշել այն ամենը, ինչ ինքը գիտի Տաթև Հովունյանի մասին: Ցանկացած մանրամասնություն կարող է պետք գալ: *Մտածիր, մտածիր*: Հա՛, չէ որ մի անգամ Սեդան ասաց, որ նրա և մոր մասնագիտությունները ինչոր ընդհանուր բան ունեն. Հրանտը շինարար-մախագծող է, իսկ մայրը՝ ներքին հարդարանքի ու կահավորանքի գեղակառուցող: Եվ ահա այժմ տեսնելով, թե Տաթևն ինչպես է ձևավորել իր բնակարանը, Հրանտը համոզվեց, որ նա տաղանդ ունի և ճիշտ է ընտրել մասնագիտությունը:

Գեղակառուցող: Հրանտը բաց արեց աչքերը, շուրթերին նուրբ ժպիտ խաղաց: Եթե իր նոր մախագծում մասնագետի կողմից ձևավորված տունն լինի որպես նմուշ, գործը միայն կշահի: Իսկ դա համոզիչ պատճառ է՝ Տաթևի հետ հանդիպելու: Հրանտը գոհունակությամբ ժպտաց: *Վաղը ևեթ կգանգեսն ու կպայմանավորվես գործնական հանդիպման մասին*: Իրեն գովելով հաջող մտքի համար՝ նա փակեց աչքերը և շարունակեց փորփրել հիշողությունը:

Սեդայի քույրը երկու տարով մեծ է նրանից, ամուսնացած է և փոքր երեխա ունի: Այսքանը: Կարծես թե ինքն այլևս ոչինչ չգիտի: Ստորելով՝ Հրանտը խոժոռվեց, և հանկարծ հիշեց մի արտահայտություն: Սեդան պատմում էր, որ իր հայրը մահացել է, երբ ինքը երեք տարեկան էր, մորը այրիացնելով երիտասարդ տարիքում՝ քսաներեք տարեկանում: Ուրեմն մայրը մեծ է Սեդայից քսան տարով և հիմա երեսունինը տարեկան է... *Տաթևը երեք տարով է ինձնից մեծ:*

Եվ Հրանտը քահ-քահ ծիծաղեց. *մի՞թե Տաթև Հովունյանը տատի է...*

... - Սեթյան, դու հիմարի մեկն ես:

Ջուրը կլանեց այդ մեղադրանքը՝ հոսելով լողախցիկի պատերով: Ջրի շիթերը խփում էին Հրանտին, և նույն համաչափությամբ արյունը զարկում էր քունքերին: Հրանտը լավ գիտեր, որ այդ գլխացավի պատճառը խղճի խայթն է: Որոշելով, որ բավականին երկար կանգնեց ձիգ շիթերի տակ, նա անջատեց ծորակը և դուրս եկավ խցիկից:

Նա ի՞նչ է անում: Լալի՞ս է: Հրանտը փշաքաղվեց, և պատճառը իր մտքերն էին, այլ ոչ թե մարմնի վրայով հոսող ջուրը: *Եթե լալիս է, ես սխալվում էի:* Նա պոկեց կարմիր ցամքոցը թափանցիկ կեռիկից: *Չէ՛, սխալվում էի, եթե նա չի՛ լալիս:*

Տաթև:

Նրա անունը հառաչանքով արձագանքվեց Հրանտի հոգում: *Ես վիրավորեցի նրան՝ կնոջը, որն ինձ շատ ավելի մեծ հաճույք էր պարգևում, քան ականկալում էի ստանալ ողջ կյանքիս ընթացքում: Եվ ես դիտավորյալ վիրավորեցի նրան:*

Հայիոյանք տալով՝ Հրանտը սրբվեց և ցամքոցը գցեց հատակին: Գրո՛ղը տանի, չէ որ ինքը նման վարքի համար պատճառներ ուներ: Այո, բայց դրանք բոլորն էլ սխալ են: Հոգնած

հոգոցով նա վերցրեց ցամքոցը հատակից և գցեց զամբյուղը: Զագուստը վրան քաշելով՝ Զրանտը վճռականորեն բարձրացրեց կզակը: Նա պետք է ներողություն խնդրի Տաթևից: Չէ՛, դատարկ ներողությունը շատ քիչ է:

Զրանտը բաց արեց դուռը և մտավ ննջասենյակ: Զավաքված մահճակալ: Ամենուրեք՝ կարգ ու կանոն: Իսկ Տաթևը չկա: Ինչ-որ տեղ ներսը մի միտք առկայժեց. նա ոչ ննջարանում է, ոչ տանը, ոչ էլ շինհրապարակում: Պետք չէր անգամ մոտենալ պատուհանին. Զրանտը գիտեր, որ տան մոտ չի տեսնի նրա ինքնաշարժը: Վստահ էր, որ *Աուդին* այնտեղ չէ: Նա անցավ սենյակով ու նստեց մահճակալի եզրին:

Ինքն ինչպե՞ս հայտնվեց այս իրավիճակում: Ինչի՞ց սկսվեց այդ ամենը: Զրանտը ցրվածությամբ ձեռքն անցկացրեց վառ ծածկոցի վրայով:

Չարություն: Դա նրա արձագանքն էր տարիների ընթացքում կուտակված վիրավորանքին: Այն պատճառով, որ ժամանակին ինչ-որ կին դավաճանել էր նրան: Իսկ մի ուրիշը՝ նրա եղբորը: Բայց ամենագլխավորն այն էր, որ այդ չարությունն առաջացել էր վախից, երբ նա գիտակցել էր, թե իրեն ինչքան է հարկավոր Տաթևը:

Խանդի պատճառով այսօր չարությունը դուրս եկավ վերահսկողությունից, երբ Զրանտը լսեց, թե բանվորներն ինչ կերպ արձագանքեցին Տաթևի հայտնվելուն: Երբ տանիքից տեսավ, թե ինչքան գեղեցիկ ու ցանկահարույց է նա: Այդ պահին, տենչալով նրան ու վախենալով այդ ցանկությունից, Զրանտը որոշեց նրան ցույց տալ իր իշխանությունը, վիրավորել, որովհետև Տաթևը նրան ստիպել էր զգալ և վերստին սիրել: Եվ միայն Տաթևին կորցնելու վախից Զրանտը նրան ստիպեց խոստովանել, որ Տաթևն ունի նրա կարիքը:

Իսկ ինձ ի՞նչ տվեց այդ արարքը:

Խոր հոգոց հանելով՝ Հրանտը ելավ մահճակալից, մոտեցավ դռանը, շրջվեց ու հայացքով ընդգրկեց սենյակը, որ Տաթևը ձևավորել էր նրա համար:

Դատարկ մահճակալ: Ամայի սենյակ:

Լքված տղամարդ:

Տաթևը հեռացել էր: